

Հայաստանի Օրհուս կենտրոնների 2010թ. գործունեության տարեկան հաշվետվություն

2010թ. Հայաստանի 14 Օրհուս կենտրոններն սկսել են աշխատել համաձայն կենտրոնների կանոնակարգի, հինք ընդունելով Օրհուսի կոնվենցիան և Փոխըմբռման հուշագիրը, ՕԿ-ների ռազմավարական գործողությունների պլանի (2009-14) իրագործման համար մշակված ճանապարհային քարտեզը: ՕԿ-ների աշխատանքը կազմակերպվել է համակարգողների կողմից մշակված և փորձագիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան- ուղեցույցի օգնությամբ:

Կենտրոնների գործունեությունը նպաստում է Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացմանը և ուղղված է գլոբալ, տարածաշրջանային, տեղական և կոլոգիական հիմնախնդիրների լուծմանը:

Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը հասարակայնությանը տրամադրվում է ըստ պահանջի, www.aarhus.am կայքի միջոցով և տարածվում է էկոլոգիական տեղեկատվության հասարակական էլեկտրոնային ցանցերով: Կենտրոնները իրականացնում են շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, բազայավորում, տրամադրում ըստ պահանջի և տարածում շահագրգիռ կողմերի միջև: Յուրաքանչյուր Օրհուս կենտրոն ունի իր էկոլոգիական տեղեկատվության հասարակական էլեկտրոնային ցանցը, որում ընդգրկված են տվյալ մարզի ՀԿ-ների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և անձանց էլեկտրոնային հասցեներ: Օրհուս կենտրոնների էլեկտրոնային ցանցերի միջոցով էկոլոգիական տեղեկատվությունը հասու է դառնում հանրապետության ողջ տարածքում:

Տեղեկատվությունը հասարակայնությանը առավել մատչելի դարձնելու նպատակով կազմակերպվում են տեղեկատվական սեմինարներ, էկոկրթության և էկոդաստիարակության մակարդակի բարձրացմանը նպաստող միջոցառումներ, մամլո ասուլիսներ, շնորհանդեսներ, գործնական աշխատանքներ (ծառատունկ, տարածքի մաքրում և այլն) միջազգային էկոլոգիական տոների նշում և այլն:

2010թ. ընթացքում 14 կենտրոններում կազմակերպվել է տեղեկատվության մատչելիությանը նպաստող ընդհանուր թվով **249** սեմինար-քննարկումներ, (մասնակիցների թիվը **4978**), էկոկրթությանը և էկոդաստիարակությանը նպաստող **365** միջոցառում (մասնակիցների թիվը **6059** , շրջակա միջավայրի թեմաներով նկարչական, շարադրությունների և այլ մրցույթներ, ցուցահանդեսներ, լրացուցիչ դասընթացներ մանկապարտեզներում, դպրոցներում ու ԲՈՒՀ-երում, բաց դասեր և ֆիլմերի դիտումներ կենտրոններում և այլն), **84** էկոլոգիական օրերի նշում և շնորհանդեսներ (մասնակիցների թիվը **1774**), **17** մամլո ասուլիս, **57** գործնական աշխատանք (ծառատունկ, տարածքի մաքրում, տարածքի ուսումնասիրում) :

ՕԿ-ներն հանդիսանում են կապող օղակ պետական և ոչ պետական մարմինների միջև, ինչը նպաստում է Հայաստանի շրջակա միջավայրի հարցերի կառավարման բարելավման գործընթացին, խթանելով թափանցիկությունը և ժողովրդավարությունը: Կենտրոնները էկոլոգիական խնդիրների շուրջ կազմակերպում են կլոր սեղաններ, հանրային քննարկումներ և այլ միջոցառումներ՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ (ներկայացուցիչներ ՀՀ նախարարություններից, ՏԻՄ-երից, միջազգային և պետական օղակներից, գիտական և բիզնես սեկտորից, ՁԼՄ-ներից, ՀԿ-ներից և այլն):

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոններում կազմակերպվել են **152** (մասնակիցների թիվը **2996**) հանրային քննարկում, **169** աշխատանքային հանդիպում-քննարկումներ ՏԻՄ-երի, ՀԿ-ների և այլ կառույցների հետ, **39** փորձագետների խորհրդի նիստեր և **120** համատեղ այլ կազմակերպությունների հետ կազմակերպված կլոր-սեղան քննարկումներ:

Քննարկումների արդյունքում հիմնախնդիրների լուծման առաջարկներ են ներկայացվել համապատասխան մարմիններին:

ՕԿ-ների գործունեությունը նպաստում է հանրության մասնակցությանը շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների կայացմանը: Կենտրոնները շահագրգիռ հասարակությանը տեղեկացնում են շրջակա միջավայրի հարցերի շուրջ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի և էկոլոգիական փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ նախագծերի վերաբերյալ կայանալիք հասարակական լուսմների մասին և աջակցում են հասարակական լուսմների կազմակերպմանը:

Նշված ժամանակահատվածում կենտրոններում տեղի են ունեցել հետևյալ հանրային լուսմները.

-Կապանի ՕԿ-ում` «ԴԻՆՈ ԳՈՒԴ ՄԱՅՆԻՆԳ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ- «Գեղանուշ գետի ձորում պոչամբար տանող պոչատար ներքևի հարթակի ուղեգծով Աշխատանքային նախագծի» հանրային լուսմ:

-Դիլիջանի ՕԿ-ում ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջան» տարածաշրջանային ֆինանսաբանկային համալիրի ՇՄԱԳ նախագծի վերաբերյալ:


-Գյումրիի ՕԿ-ում` Հյուսիս-հարավ ձանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի «Աշտարակ-Գյումրի» մայրուղու ՇՄԱԳ նախագծի հանրային լուսմներ

Երևանի ՕԿ-ը մասնակցել է Ազգային ժողովում կազմակերպված ՀՀ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով փաթեթով ներկայացված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Աղբահանության եւ սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքների նախագծերի քննարկմանը, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունում կազմակերպված <Ընդերքի մասին> օրենսգրքի վերաբերյալ հասարակական լուսմներին: Նշված բոլոր նախագծերը կենտրոնի կողմից նախապես (մինչև հասարակական լուսմները) էլեկտրոնային ցանցով տարածվել է ՀԿ-ների և այլ շահագրգիռ կազմակերպությունների միջև և վերջիններիս հնարավորություն է տրվել նախագծերի վերաբերյալ առաջարկեր և դիտողություններ ներկայացնել համապատասխան հանձնաժողովներին:


Արդարադատության մատչելիության ուղղությամբ նշված ժամանակահատվածում կենտրոնների կողմից իրականացվել է 8 միջոցառում` հիմնականում էկոլոգիական իրավունքի և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող օրենքների մասին իրազեկում :

2010թ. ընթացքում իրականացված միջոցառումները` ըստ կենտրոնների գրաֆիկական տեսքով բերված է ստորև.


2010 իրականացված միջոցառումները




Միջոցառումների մասնակիցներ



Ընդամենը միջոցառումներ և մասնակիցներ



Այլ միջոցառումներ



Նշված ժամանակահատվածում ՕԿ-ների կողմից կազմակերպվել է ընդհանուր թվով 1192 միջոցառում, որոնց մասնակցել են 16 131 մարդ:

ՕԿ-ները ակտիվ համագործակցում են ՏԻՄ-երի, շրջակա միջավայրի հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչ պետական կառույցների, գիտական, քիզնես և ՋԼՍ սեկտորի հետ: Կազմակերպվում են համատեղ միջոցառումներ, կենտրոնների համակարգողները մասնակցում են այդ կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև տրամադրում են տարածք և կազմակերպչական հարցերով աջակցում են այլ կազմակերպությունների կողմից կենտրոններում իրականացվող միջոցառումներին: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնները տրամադրել են տարածք և մասնակցել են այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված ընդհանուր թվով 227(այդ թվում` 120 համատեղ կազմակերպված) միջոցառումների:

ՕԿ-ների համակարգողները մասնակցել են «Խազեր» էկոլոգոնշակութային ՀԿ-ի կողմից կազմակերպված «Կոպենհագենից դեպի Կանկուն (Մեքսիկա)-Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի 16-րդ նստաշրջանի նախաշեմին» կոնֆերանսին, մասնակցել են նաև Օրհուսի կոնվենցիայի իրականացման առաջընթացը Հայաստանի համայնքներում քննարկելու նպատակով սեպտեմբերի 15-16-ը Ծաղկաձորում տեղի ունեցած <Էկոլոգիական իրավունքները Հայաստանի համայնքներում> թեմայով սեմինարին: Նշված միջոցառումները կենտրոնների համակարգողներին հնարավորություն տվեցին գիտելիքներ ստանալու կլիմայի գլոբալ փոփոխությունների համաշխարհային գործընթացի, շրջակա միջավայրի ազդեցության գնահատմանը էկոլոգիական կառավարման ոլորտում, տեղական ինքնակառավարման մարմինների ոլորտում օրենսդրական առաջընթացի խնդիրներին:

Երևանի Օրհուս կենտրոնում տեղի է ունեցել կենտրոնների համակարգողների չորս աշխատանքային հանդիպում. քննարկվել են կենտրոնների ընթացիկ և հետագա գործունեությունները, իրավական կարգավիճակի հետ կապված հարցեր, ինչպես նաև ԵԱՀԿ փորձագետի կողմից համակարգողների համար լուսաբանվել է <Տեղեկատվության ազատության մասին> և <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքները:

Մի շարք ՕԿ-ներ ՀԿ-ների հետ համագործակցելով իրականացնում են դրամաշնորհային ծրագրեր: ԵԱՀԿ Երևանի գրասենյակի աջակցությամբ` Քաղաքացիական գործողություններ


հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ՔԳԱՇՄ) փոքր գրանտային ծրագրերի շրջանակներում ՀԿ-ների հետ համագործակցությամբ ծրագրեր են իրականացրել Գորիսի, Ալավերդու, Գավառի, Հրազդանի, Եղվարդի ՕԿ-ները: ՀԿ-ների հետ համագործակցությամբ մի շարք կենտրոններ իրականացրել են նաև այլ դրամաշնորհային ծրագրեր:

ՕԿ-ների համակարգողները մշտական աշխատանք են իրականացնում կենտրոնների այցելուների հետ: Կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը կազմել է **10 486**-ը մարդ, որոնցից **7370** օգտվել է կենտրոնների ծառայությունից, մնացածը տեղեկատվություն, խորհրդատվություն ստանալու և այլ հարցերով: Այցելուների 38%-ը կազմել են պատանիներ և երիտասարդներ, 26 %-ը ՀԿ, 9,0 %-ը ՋԼՄ ներկայացուցիչները: Մնացած 27%-ը կազմել են տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարները և շահագրգիռ քաղաքացիները:

ՕԿ-ների ծառայություններից օգտվողների թիվը ըստ կենտրոնների

Կենտրոններ	Գրադարան, խորհրդատվություն	Տեսադարան	Ինտերնետ, հեռ., ֆաքս	Տպիչ, պատճենահանիչ	Այցելուների ընդհ. թիվը
Երևան	257	37	170	97	970
Գորիս	65	45	129	127	450
Կապան	163	12	146	250	671
Դիլիջան	42	36	35	110	408
Իջևան	10	17	21	22	102
Գավառ	47	35	59	76	1500
Հրազդան	49	12	27	31	157
Եղվարդ	154	34	524	265	1200
Ապարան	21	25	22	38	135
Գյումրի	162	135	238	232	803

Եղեգնաձոր	134	32	66	65	450	
Վանաձոր	232	28	450	191	814	
Ալավերդի	158	136	468	511	1350	
Ստեփանավան	295	33	451	143	1073	
Ընդամենը	1789	617	2806	2158		10485(ընդհանուր այցելուների թիվը)
7370(յժառայություններից օգտվողների ընդհանուր թիվը)						



Մշտապես համալրվում է կենտրոնների գրադարանները և ֆիլմադարանները ՄԱԿ-ի և ԵԱՀԿ գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀԿ-ների և այլ կառույցների կողմից տրամադրվող նյութերի հաշվին:

Կենտրոնների գործունեությունը խթանում է կամավորության գաղափարի տարածմանը: Կենտրոնների աշխատանքներում մշտապես ներգրավվում են կամավորներ:

Միջազգային հանդիպումներում Հայաստանի Օրհուս կենտրոնների փորձը գնահատվում է որպես առաջավոր և նույնիսկ շատ երկրներից (Վրաստան՝ 2008թ., Ալբանիա՝ 2008թ., Բելոռուսիա՝ 2009թ., Ղազախստան՝ 2009թ.) գալիս են այդ փորձն ուսումնասիրելու և իրենց երկրներում ներդնելու համար: 2010թ. Հայաստանի Օրհուս կենտրոններ այցելեց Մոլդովայի պատվիրակությունը:

Facebook սոցիալական ցանցում ձևավորվել է <Հայաստանի Օրհուս կենտրոններ խումբը>: Ցանցը նպաստում է կենտրոնների գործունեության լուսաբանմանը, կենտրոնների միմյանց միջև և ավելի լայն ոլորտների հետ հաղորդակցմանը, փորձի փոխանակմանը, տեղեկատվության ձեռքբերմանը, կենտրոնների գովազդին (ճանաչելիությանը):

Կենտրոնների կողմից 2010թ. կատարած աշխատանքների ամփոփ հաշվետվությունները տեղադրված են կենտրոնների կայք էջերում (www.aarhus.am կայք, “Օրհուս կենտրոններ”, “Կենտրոնի գործունեություն”):

Օրհուս կենտրոնների 2010թ. գործունեության արդյունքները.

- 2010թ. Հայաստանի 14 Օրհուս կենտրոնների կողմից կազմակերպված միջոցառումների (կլոր սեղաններ, քննարկումներ, էկոլոգիական օրերի նշում, էկոկրթական միջոցառումներ, հասարակական լուսումներ և այլն) մասնակիցների և կենտրոնների այցելուների (այդ թվում ծառայություններից օգտվողների) ընդհանուր թիվը կազմել է **26671** մարդ, որը 30%-ով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:
- Կենտրոնների կողմից էկոկրթությանն ու էկոդաստիարակությանն ուղղված միջոցառումների արդյունքում էկոկրթություն է ստացել **6752** մարդ, իրազեկման սեմինարների, քննարկումների, կլոր սեղանների արդյունքում էկոլոգիական խնդիրների վերաբերյալ իրազեկվել են **9379** մարդ:
- ՀՀ Կառավարության 25 նոյեմբերի 2010թ. N 1551-Ն՝ Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգից բխող՝ 20011-2015 թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին որոշման մեջ 3.1 կետով նշված է ՕԿ-ների տեղեկատվական և նյութատեխնիկական ապահովումը: Այս որոշումը ՕԿ-ների համար կարելի է արդյունք

համարել, քանի որ ՀՀ կառավարությունը էկոլոգիայի և էկոդաստիարակության միասնական համակարգի մեջ կարևորում է ՕԿ-ների դերը: Եվ սա անշուշտ այս ուղղությամբ կենտրոնների կատարած աշխատանքների արդյունք է:

- Էկոլոգիական խնդիրների շուրջ կլոր սեղանների, քննարկումների արդյունքում այս խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկներ են ներկայացվել համապատասխան օղակներին: ՏԻՄ-երի կողմից հաշվի են առնվել այդ առաջարկները և ներառվել են բնապահպանական կառավարման ռազմավարական ծրագրերում, որոշ համայնքների 2011թ. բյուջեի քննարկումների ժամանակ կենտրոնների կողմից կատարված առաջարկների հիման վրա գումարներ են նախատեսվել էկոլոգիական խնդիրների լուծման համար:
- www.aarhus.am կենտրոնների կայքի միջոցով հասարակությանը տրամադրվում է էկոլոգիական տեղեկատվություն, ինչպես նաև լուսաբանվում է կենտրոնների գործունեությունը: Կայքի այցելուների ընդհանուր թիվը առ 29.12.2010թ. կազմել է **47 000** մարդ:
- Կենտրոնների գործունեությունը մշտապես լուսաբանվել են մի շարք ՀՐ-երով, ինչպես նաև մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներում (ավելի քան **300** հոդված):
- ՕԿ-ների և էկոլոգիական հասարակական դաշինքի միջև, որի կազմում ընդգրկված են շուրջ 50 ՀԿ-ներ, համագործակցության փոխհամաձայնեցում է ձեռքբերվել: ՕԿ-ները ընդգրկվել են էկոլոգիական հասարակական դաշինքի ցանցում: Ողջ տարվա ընթացքում տեղի է ունեցել տեղեկատվության փոխանակում և հանրապետության մի շարք թեժ էկոլոգիական խնդիրների ուղղությամբ համատեղ պայքար է ձևավորվել՝ ՍՕՏ Արգիճի, ՍՕՏ Երևան, ուրանի ծրագրի դեմ, ՍՕՏ Խոսրով, Ընդերքի մասին օրենսգրքի ընդունման գործընթացի թափանցիկություն և այլն: Նշված խնդիրների շուրջ մի շարք դիմումներ են հղվել ՀՀ նախագահին և Կառավարությանը, Ազգային ժողովի նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, միջազգային կազմակերպություններին և այլն, կազմակերպվել են ստորագրահավաքներ, հանրահանաքներ, քննարկումներ համայնքներում և այլն:
- Տարվա ընթացքում Օրհուս կենտրոնների անունից պետական և միջազգային տարբեր կազմակերպություններին ուղղվել է ավելի քան **10** նամակ, որոնցում ներկայացվել ու հիմնավորվել է կենտրոնների անկախ գործունեության անհրաժեշտությունը, արդյունքում՝ նախնական համաձայնություն է ձեռք բերվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի, ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ բնապահպանության նախարարությունների միջև Օրհուս կենտրոնների իրավական կարգավիճակ ստանալու մասին:

2010թ. արդյունքներն ըստ կենտրոնների.

Գավառի Օրհուս կենտրոնի 2010թ. ամենամեծ ձեռքբերումը ՍՕՏ Արգիճի խմբի տարած հաղթանակն է՝ այն է Արգիճի գետի Գայլաձոր վտակի հունի վրա ՓՀԷԿ-ի ապօրինի շինարարությունը կանխելը /գետի հունը փոխելու ակնկալիքով/, որը խախտում էր ոչ միայն Սևանա լճի ջրային հաշվեկշիռը, այլ նաև մարզի 5 համայնքներին զրկում էր ոռոգման ջրից: Այս խնդիրը օրենքի սահմաններում լուծելու, գործընթացը կանխելու և ծանր պայքարում նախնական հաղթանակ տանելու համար կենտրոնին աջակցել են

Էկոլոգիական հասարակական դաշինքը, ԵԱՀԿ Երևանի գրասենյակը, Գեղարքունիքի մարզպետարանը /որը շինթույլտվություն չէր տվել կառուցող կազմակերպությանը/, բազմաթիվ ԶԼՄ-ներ, „Ժառանգություն,, խմբակցությունը, և ամենակարևորը մարզի հազարավոր բնակիչներ, ովքեր մինչև վերջ պաշտպանեցին և՞ Սևանի և՞ իրենց Սահմանադրական իրավունքը:

Կենտրոնն „ԲԼԵՋԱՆ,, ՀԿ-ի հետ իրականացրել է հետևյալ ծրագրերը.

1. „Օրհուսի Կոնվենցիայի լուսաբանում,, մարզի 92 համայնքապետերի և 28 ՀԿ-րի համար – ֆինանսավորումը Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի:

2. „Գեղարքունիքի մարզի բնապահպանական հիմնախնդիրները,, ֆիլմ –ֆինանսավորումը

ԵԱՀԿ Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի ԲԳԱՇՄ) Փոքր դրամաշնորհային ծրագրի

Արդյունքում մարզի շուրջ 2000 բնակիչներ տեղեկացել են մարզում առկա էկոլոգիական հիմնախնդիրների մասին, իրազեկվել են այդ ոլորտում իրենց իրավունքների մասին, նաև տեղեկացել են թե ինչպես կարող են իրենց համայնքներում որոշումների իրականացման գործընթացում իրենց մասնակցությունն ունենալ՝ ակտիվ համագործակցելով ՏԻՄ-րի հետ:

- **Կապանի Օրհուս կենտրոնի** կողմից իրականացվել է ուրանի հանքավայրի հնարավոր շահագործման դեպքում էկոլոգիական աղետի վերաբերյալ հանրության իրազեկում: Ուրանի հանքավայրի շահագործման դեմ և ուսումնասիրությունների դադարեցմանն ուղղված կենտրոնի մասնակցությամբ և աջակցությամբ կազմակերպվել է ստորագրահավաք և հանրահավաք: Կապանի Օրհուս կենտրոնի և էկոլոգիական հասարակական դաշինքի կողմից համատեղ դիմում է ուղղվել Կապանի քաղաքապետին և ավագանու անդամներին միանալու ուրանի հանքավայրի հետախուզական աշխատանքների, հանքավայրի հետագա շահագործման դեմ ստորագրահավաքին, արդյունքում՝ Կապանի ավագանին որոշում է ընդունել և դիմել է հանրապետության նախագահին, կառավարությանը չեղյալ համարել կառավարության որոշումը և դադարեցնել ուրանի հանքավայրի հետախուզական աշխատանքների շարունակումը :
- Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի թափոնատարի ուսումնասիրման աշխատանքային խմբի դիտարկումների արդյունքների քննարկում, որի արդյունքում հիմնովին վերանորոգվել է և ծածկվել է թափուկատարի առանձին բաց հատվածները:
- **Գյումրու Օրհուս կենտրոնի** նախաձեռնությամբ կատարվել է Գյումրու Արագած ճեմափողոցում ապօրինի շինարարությունը: Նշված տարածքը Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի և Գյումրի քաղաքի պատմական կենտրոնի գոտիավորման նախագծի համաձայն հանդիսանում է հասարակական օգտագործման կանաչ տարածք եւ այդտեղ արգելված է կապիտալ շինարարությունը:
- Երկրի օրվա 40-ամյա հոբելյանին նվիրված՝ **Երևանի Օրհուս կենտրոնը**, <Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա> ՀԿ-ի հետ համատեղ իրականացրեցին <Երկրի օր-2010 Հայաստան> խորագրով մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը կլիմայի փոփոխության հիմնախնդրի մասին: Այս միջոցառումների շրջանակներում Հայաստանի բոլոր Օրհուս կենտրոնների մասնակցությամբ կազմակերպվեց Հայաստանում <կանաչ ապրելակերպի խթանմանը> նպաստող ստորագրահավաք (4800 ստորագրություն): Միջոցառումների արդյունքում առաջարկ ներկայացվեց ՀՀ կառավարությանը՝ խրախուսել մասնավոր սեկտորի կազմակերպություններին՝ որդեգրելու <կանաչ ապրելակերպ>: Արդյունքում ստացվել է դրական պատասխան. պետության կողմից մշակվող ծրագրերում հաշվի կառնվեն այդ առաջարկները:
- Երևան քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավման ուղղությամբ մի շարք առաջարկներ են ներկայացվել Երևանի քաղաքապետարանին, գտնվում են որոնք քննարկման փուլում:
- **Ալավերդու Օրհուս կենտրոնը** Ուրբան կայուն զարգացման հիմնադրամի հետ համատեղ իրականացրել է ծրագիր, որի արդյունքում հիմք է դրվել կենցաղային աղբի տեսակավորմանը և իրականացվում է պլաստիկի տեսակավորված հավաքում: ԵԱՀԿ Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ԲԳԱՇՄ) Փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Ալավերդու Օրհուս կենտրոնը, «Անահիտ կանանց աջակցության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացրել է Մկղեղի պահուստավայրի՝ գերեզմանոցի ուսումնասիրություն: REC CAUCASUS, Եվրամիություն, «Green Lane» ՀԿ-ի

հետ համատեղ Ալավերդու Օրհուս կենտրոնը իրականացրել է Տարաշաշրջանի դեգրադացված հողերի ուսումնասիրություն:

- Դիլիջանի քաղաքապետարանի պատասխանատուների և ՀԿ-ների, բնակիչների ու ակտիվ խմբերի մասնակցությամբ անց է կացվել 2011 թ. տեղական բյուջեի հանրային քննարկում ու ներկայացվել են առաջարկություններ, որոնց մի մասը ՏԻՄ-երի կողմից կներառվեն 2011 թ. բյուջեում
- **Դիլիջանի Օրհուս կենտրոնը** „Դիլնետ սերվիս ՀԿ-ի հետ համատեղ իրականացրել է „ «Անգին է ջրի կաթիլը...» դրամաշնորհային ծրագիրը: Այս ծրագրի արդյունքում իրականացվել է Դիլիջան քաղաքի բնակելի և վարչական տարածքների, ճանապարհների, Աղստև գետի ափամերձ հատվածների աղբից մաքրման աշխատանքներ, ծրագիրը նպաստել է նաև բնակիչների մոտ մաքուր համայնք ունենալու գաղափարին: Այս ծրագրի արդյունք կարելի է համարել նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության (USAID), և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) ֆինանսական աջակցության հետ միասին, ծրագրին ֆինանսական աջակցություն է ցուցաբերել նաև մասնավոր սեկտորը՝ Կոկա-Կոլա ՀՐԲ Արմենիա ընկերությունը:
- **Եղվարդի Օրհուս կենտրոնը** «Եղվարդ» երիտասարդական-բնապահպանական ՀԿ-ի հետ համատեղ ԲԳԱՇՄ ծրագրի շրջանակներում ՏԻՄ աշխատակիցների և հասարակության համար լուսաբանել է Օրհուսի կոնվենցիան և մի շարք ՀՀ էկոլոգիական օրենքներ (ավելի քան 400 մասնակից): Կենտրոնի կողմից ֆերմերների համար լուսաբանվել են ջերմոցային զագերի հետ կապված խնդիրները, համատեղ աշխատանքներ են տարվում դրանց նվազմանը միտված ծրագրերի և գործողությունների մշակման ուղղությամբ: /4 խոշոր եղջերավորների ֆերմա, 2 թռչնաբուծարան/: Եղվարդի Օրհուս կենտրոնի կողմից նախապատրաստական աշխատանքներ են սկսվել աղբահանության ոլորտի կառավարումը բարելավելու ուղղությամբ, 2 համայնքի ղեկավարներ համաձայնել են իրականացնել տեսակավորված աղբահանություն:
- **Հրազդանի Օրհուս կենտրոնը** համագործակցելով <Վառվող աստղ> ՀԿ-ի հետ իրականացրել է Հրազդանի տարածաշրջանի շրջակա միջավայրի վիճակի բարելավման ծրագիր , որի ընթացքում իրականացվել է շրջակա միջավայրի վիճակի ուսումնասիրություններ, արտադրական ընկերությունների և տեղական իշխանության միջև ստեղծվել է երկխոսության դաշտ, որը նպատակ ունի շահագրգռելու արտադրական ընկերություններին կրճատել արտանետումները:
- **Գորիսի Օրհուս կենտրոնի** Կենտրոնի առաջարկությամբ և ակտիվ մասնակցությամբ, սկսվել են Գորիսի շրջանի գյուղական համայնքներում աղբավայրերի ստեղծման աշխատանքները, Գորիսի Օրհուս կենտրոնը մարզպետարանին տրամադրել է աղբավայրերի ստեղծման համար անհրաժեշտ օրենսդրական փաթեթը և կազմակերպել է քննարկումներ հասարակության ակտիվ մասնակցությամբ, արդյունքում՝
 1. Համայնքներում այս ուղղությամբ սկսվել են համապատասխան նախապատրաստական աշխատանքներ
 2. Համայնքների կողմից կատարվում են միջհամայնքային ճանապարհների սիստեմատիկ մաքրում աղբից:
- **Գորիսի Օրհուս կենտրոնը** “Մոսե” կանանց հիմնահարցեր” ՀԿ-ի հետ համատեղ ԵԱՀԿ Քաղաքացիական գործողություններ հանուն անվտանգության և շրջակա միջավայրի (ԲԳԱՇՄ) Փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացրել է <Կանաչ համայնք> ծրագիրը: Ծրագիրը նպաստել է համայնքի բնակիչների մոտ հանգստի գոտիների պահպանության մասին իրազեկության բարձրացմանը, մշակվել են կանաչ գոտիների և հանգստի վայրերի խնամքի և պահպանության մեխանիզմներ, որոնք ներկայացվել են համապատասխան օղակներին:
- **Սպարանի Օրհուս կենտրոնի** և ՏԻՄ –երի միջև ձևավորվել է համագործակցություն ալպյան մարզագետիկներում հրդեհների դեմ պայքարի, քաղաքի կենտրոնում ճահճացող տարածքի վերացման և մի շարք այլ խնդիրների համատեղ լուծման ուղղությամբ: Ճահճացող տարածքի բարեկարգման աշխատանքների առաջարկներ են ներկայացվել Սպարանի քաղաքապետարան և արդյունքում քաղաքապետարանի 2011թ. բյուջեից գումարներ են հատկացվել նշված խնդրի վերացման համար:

- **Ապարանի Օրհուս կենտրոնի** կողմից կազմակերպվել է քննարկում Ապարանի ջրամաքրման կայանի վերականգնման անհրաժեշտության վերաբերյալ, որը առաջին անգամ էր կազմակերպվում համայնքում: Արդյունքում որոշվել էր դիմել ..Քասաղի և Ապարանի ջրամբարի ջրի մաքրության ապահովման նպատակով համապատասխան մարմիններին կոլեկտորի հրատապ կառուցման խնդրով: Նշված խնդրի ուղղությամբ համապատասխան մարմինների տեղեկացմամբ արդեն արդյունք կա:
- **Եղեգնաձորի Օրհուս կենտրոնը** տարածաշրջանում ստեղծել է բնապահպանական կլաստեր, որում համախմբվել են համայնքները ընդհանուր բնապահպանական խնդիրները միահամուռ ուժերով լուծելու և տեղեկատվական ցանց հիմնելու նպատակով:
- **Վանաձորի Օրհուս կենտրոնում** շահագրգիռ հանրության մասնակցությամբ քննարկվել է ՀԷԿ-ի նախագիծ, որը նախատեսվում է կառուցել Լոռու մարզի Չիչխան գետի վրա: Բնակչության բողոքների համաձայն ՀԷԿ -ի կառուցումը կազմակերպությունը չի սկսվել:
- **Ստեփանավանի Օրհուս կենտրոնը** ընդառաջելով Ստեփանավանի Չարենց փողոցի բնակիչների խնդրանքին կազմակերպել է հանրային քննարկում` Ստեփանավանի Կենտրոնական /Փակ/ գերեզմանատան ընդլայնման վերաբերյալ որոշման/12 մետր/ վերաբերյալ: Արդյունքում դիմում ուղղվեց Լոռու քաղաքապետին, Ստեփանավանի հակահամաճարակային կենտրոնի տնօրենին, և Լոռու մարզպետին: Արդյունքի չհասնելով պայքարը շարունակվեց և Ստեփանավանի Օրհուս կենտրոնի կողմից օրենսդրական հիմնավորումներով դիմում հղվեց ՀՀ վարչապետին: